

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թ. արեւելահայկական
Պոլսի համար արեւելահայկական 12 փրակ
» » վեցամսեայ 6 »
Արտատպարանի » արեւելահայկական 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻՒՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն զրկել հետեւեալ հասցեով
ՍՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՐՈՒՆԵՅ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն զրկուիր եւ յարմար դաստաւ-
ները միայն կը հրատարակուին անող-
ջովիւն կամ ընտանիքի
Իրանցեան տղը 20 տարեկան երե-
սիկ անցի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ե.

Երբ համերաշխ գործունէութեան պէտքը համոզումով կընդունինք, հարկ է որ որոշապէս գիտնանք թէ որոնք են այն յեռարանները, որոնց հիմին վրայ ամենքս ալ տնտեսի ինքզինքնիս հայ կըզգանք ու կը դաւանինք, եւ որոնք չէնք արտաքին կամ պատահական, այլ նախնային, մշտագոյ բարոյական պայմաններն են հայութեան գոյութեան:

Ասոնք են հայ անունը եւ հայրենիքը, որ սրբան է ազգ. յիշատակներու, հայ լեզուն՝ որ ընդհանուր կապն է ազգութեան, հայ եկեղեցին՝ որ իր փարախին մէջ կը հաւաքէ աշխարհիս չորս կողմը ցրուած գրեթէ բոլոր հայ ժողովուրդը, եւ վերջապէս հայ անհատը, որ ամբողջ ազգութեան մէջ լրացուցիչ մասնիկն է:

Մեր գոյութեան այս պայմանները զօրացնել ձգտելու է ամէն հայ:

Հայրենիքը որ մեծ մասամբ այսօր թուրքին իշխանութեան ներքեւ կը գտնուի, հայ անունէն անբաժան տաւաղ մըն է, պապի նախնային ժառանգութիւն մըն է, որուն օր մը տիրանալու համար հարկ է որ աստիճանաբար բարձրանանք բարոյական որոշ հասունութեան մը, որուն բացակայութեան նը պատճառով արդէն մեր ձեռքէն ելել է մեր երկիրը, այսինքն մեր տունը տեղը եւ մնացեալ ենք անտուն եւ անտէր:

Այս հասունութեան հասնելու համար համերաշխաբար պարտինք փարիլ մեր լեզուին, մեր եկեղեցիին, մեր պատմութեան, մեր աշխարհագրութեան, որոնք հայրենիքի եւ ազգութեան վաւերագրերն են. պայծառացնելու ենք եկեղեցին, սորվելու ենք մեր պատմութիւնը իբր մեր ընտանեկան անցքերուն բովանդակութիւնը, ճանչնալու ենք հայրենիքը իբր մեր տունը տեղը:

Ահա դէպ ի ուր ձգտելու է նոր ազգութիւնը եւ ինչ նպատակի

հետեւելու է կազմակերպութիւնը:

Մեր բաւական լրջութիւն ունենալու ենք համոզուելու համար թէ իւրաքանչիւր հայ, բաւ է որ այս անունը կրէ, ուղղակի կամ անուղղակի կը մասնակցի այն պայմաններուն, որոնց կենթարկուին հայութեան ուրիշ անդամները նիւթապէս կամ բարոյապէս. թէ, օրինակի համար, հայ հարուստը չի կրնար չմտաւորել այն թշուառութենէն, որուն կը մատնուի հայ աղքատը. նոյնպէս քաղաքական կացութիւնը եւ հանգամանքները նոյնն են միշտ ամէն հայու համար, ըլլայ յիշափոխական թէ պահպանողական:

Իրաւ, մեր դպրոցները, մեր հեղինակները եւ մեր հրատարակագիրները երկար տարիներէ ի վեր միեւնոյն նպատակին ձգտած են եւ ասկէ ետքն ալ պիտի ձգտեն: Սակայն այս պարագան չի կրնար աւելորդ երեւցնել առաջարկուած կազմակերպութիւնը. ընդհակառակը, արդի հանգամանքներուն մէջ անհրաժեշտ պէտք մըն է որ ազգային միութիւն մը երեւան գայ, դպրոցներու եւ հեղինակներու ցանած սերմերուն համար պարարտագոյն հողեր պատրաստելու ծրագրով:

Աշխատութիւնը երկար պիտի ըլլայ անշուշտ. կրկնենք սակայն, եւ որչափ ալ կրկնենք քիչ է թէ մենք պէտք ունինք հիմնական իրական կանխապատրաստութեանց եւ տակաւ յառաջանալու, եթէ կուզենք անվրէպ քալել դէպ ի նպատակը: Որքան ուղենք ուսումով մը ճամբան կարճեցնել, այնքան ետ կերթանք: Կանխահաս ծրագիրներ միշտ ջուրը կ'իյնան: Մեր յիշափոխական շարժումներն ալ այս պատճառով ջուրն ինկան: Ներքին չէ որ այսքանը տակաւին աղէկ մը հասկցած չըլլանք:

Նախ դիրք, դպրոց, եւ լրագիր կրնան գեղեցիկ զաղափարներ ներշնչել մեզ, բայց, ինչպէս փորձը հաստատած է, չեն կրնար զործնական կրթարան մը ըլլալ այն բանին, որ ամենէն աւելի կը պակսի մեզ եւ որուն հետեւա-

պէս ամենէն աւելի պէտք ունինք — համերաշխութեան:

Կազմակերպութեան առաջին հոգը, մտածումը այն չափով ըլլայ թէ յիշափոխութիւնը քանի տարիէն պիտի կրնայ երեւան գալ եւ հայաստան որչափ ժամանակէն կրնայ ազատիլ, ալ թէ հայ ժողովուրդը ինչպէ՞ս կրնայ մտքի յիշափոխութեամբ որքան կարելի է արագ ընթանալ դէպ ի զաղափարի հասունութիւնը:

Ջանանք միայն ձեռք ձգել այս վերջինը եւ մնացածին համար մտահոգութիւն չունենանք:

Այն օրը ուր մեր բարքերուն յուր կողմը տեղի պիտի տան ընդհանուր համերաշխ եւ գիտակցական գործունէութեան՝ այն օրը փրկուած ենք արդէն:

ՄԵՐ Փ. ՊՕԼՍԵՑԻ ԱԶԳԱԿԻՅՆԵՐՈՒՆ

Փ. Պօլսոյ ազգ. վիճակը, մեզ հասած նորագոյն տեղեկութեանց համաձայն, հետզհետէ կը ծանրանայ: Առժամայ թաղ. խորհուրդը խմբովին հրաժարած, ազգեցիկ անձեր մէջ կողմ քաշուելով, անտարբեր հանդիսատեսի մը դերքն առած, աւագ երեց Տ. Արիստակէս հայրը իր կրած յուզումներէն կաթուածահար եղած, առժամայ քարոզիչ Տ. Գէորգ ժ. վարդապետ իրեն եղած սպառնալիքներէն շուարած եւ հետեւապէս ելք մը գտնելու անկարող: Ահա փոքր պատկեր մը Փ. Պօլսոյ հայութեան արդի սղբալի վիճակին, որուն պատճառները հետազոտել եւ պատասխանատուութիւնները ճշդել չէ այս տողերուն նը պատկեր. ատոր համար տակաւին կը պակսին մեզ ապահով միջոցներ:

Կուզենք միայն երկու կուսակցութեանց պիտերուն խղճին եւ ըզգացումներուն կողում մը ընել մեր սրտի խորշին լրջապէս. կը փափայինք ազգին բարւոյն անունով զիմում ընել իրենց եւ խնդրելու պահանջել որ նկատողութեան առնեն թէ ալ լեցուած է կուսակ-

ցական ծայրայեղութեանց չափը, որմէ անդին չնրեր անցնիլ այն որուն առջեւ պարտի ակնածութեամբ խոնարհիլ ամէն հայ եւ զոր ոտնակոխ ընել դաւաճանութիւն մըն է պարզապէս: Ազգային գերագոյն շահն է այն: Երկու կուսակցութեանց համար մը տամբոփման վայրկեանը հասած է: Այդ խղճամիտ ամբողջութիւն մէջ երկու կողմն ալ պիտի զգան հաւանականաբար թէ պատասխանատուութենէ ազատ չեն երբեմն զայրոյթի եւ հակառակութեան թափերուն անձնատուր եւ զած եւ ըստ այնմ գործած ըլլալով:

Սեփական սխալներու ճանաչումը եւ հակառակորդին նկատմամբ քիչ մը անյիշատելութիւն կացութիւնը փրկող եւ հայ քրիստոնէին համար շատ վայելուչ գործեր են մօտակայ տօնական օրերուն առիթով:

Հարկաւ ըսել չենք ուզեր որ իրենց համոզումները ուրանան, իրենց սկզբունքները մէկ կողմ նետեն. սակայն համոզումի հակառակորդներ մնալով հանգերձ, կրնան իբր անկեղծ մարդիկ՝ ձեռք ձեռքի տալ այն կէտին մէջ որ ազգին շահը կը վտանգուի եւ ուր իրենց միաբանութեամբ, ընչպէս քանք, կացութիւնը պիտի փրկուի: Այս կրնան եւ պարտին ընել:

Իրենց միաբանութիւնը պիտի ստիպէ ազգ. գործերուն գլուխն անցնելու չէզոք եւ հանրային վերատահութիւնը վայելող անձեր ուրոնք քիչ մը կարգի կանոնի մը տօնին գործեր ինչ որ անհրաժեշտ է զատկական օրերուն մէջ եւ մը խիթարեն տարաբաղդ աւագ երէցը:

Յուսալիր ենք որ ապարդիւն չի մնայ մեր սրտագին այս կոչը, որովհետեւ չենք կարծիք թէ ու է հայ կուսակցութեան կարենայ մոռնալ թէ Գաշնակցական, Արմենիական եւայլն ըլլալէ առաջ հայ է ինք: Հայ անունն արժանի վարմանքն այս է եւ մենք չենք տարակուսիր որ մեր Փ. Պօլսեցի եղբայրներ պիտի փութան այս պարագային մէջ ապացուցանել թէ իրենք հայութեան մէկ ընտիր մասը կը կազմեն:

ԱՆՈՒՆԻ ԱՍԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Շարժումը վերջին թիվին մէջ կը կարգանք հետեւեալ երկու նամակները, որոնք պուրակական Սիրիա շաբաթաթերթէն արտատպուած են:

ԼՐՏԵՍԱԿԱՆ ԵՐԿՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

(Թարգմ. Գեորգ. Է)

Տիկին,

Մինչեւ ցայսօր իմ նամակին չպատասխանեցիք, եւ կը տարակուսիմ: Գէթ հաճեցէք ինծի զրկել սնցազիւս, որուն շատ պէտք ունիմ:

Բիֆթին ըսեք էք որ ես իբրեւ օրագրող 3,000-ֆր. կը շահիմ, բայց ասիկա ըսւ ըսն չէ, որովհետեւ ես փարա մը իսկ չունիմ: Կը պահանջեմ 50 լիւրա յանձնելու համար Պոլիս հասնող անձին անունը: Ինչո՞ւ ձերպէս աշխատիմ: Գրեցէք ինծի նաեւ Դաթիկ մասին տեղեկութիւններ: Խնդրեմ ջանացէք որ Թուրքերը չունտով այդ անձին անունը իմանան: Այն Հայը որ հայկական թերթերը կարող է լռեցնել՝ կը կոչուի Տիգրան ձգնաւորեան:

Խնդրեմ հոգ տարէք որ չունտով ստակ ձեռք բերեմ: Յարգալից լոյսերներ:
Ձեր
Յր. Գ.

(Թարգմ. Յրան. Է)

Թանկագին Պարոն, 21 Նոյ.

Հաստատելով 17 օր առաջ գրած նամակս, որով կը ծանուցանէի ձեզ թէ կարող եմ լռեցնել առ ընդ միշտ հայ յեղափոխականներուն կողմէ խմբագրուած թերթերն ի Մարտիկա, Ժընէվ, Լոնտոն եւ այլն, եւ դուք պատեհ չը սեպեցիք պատասխանել ինծի:

Այսօր կուզեմ ծանուցանել միայն թէ անձ մը, ուսանապատակ, ընկերվարական, քանի մը օր առաջ Վառնայէ մեկնեցաւ եւ Կ. Պոլիս գնաց ընտանիքով՝ օստիկանութեան ուղարկութիւնը չհրաժարելու համար: Մակեդոնական Յեղ. Քոմիթէն զրկած է զայն լրացնելու պակասած զբաղական գումարներն հոն բնակող մակեդոնացիներէն ժողովելով: Գանձեք: Առանց զբաղի աշխատելու ու եւ չա՞ մը չունենալով, պատրաստ եմ հեռագրով հաղորդել անունն յիշեալ անձին՝ եթէ կառավարութիւնն համակերպի ինչպէս հեռագրով ինձ 50 օսմ. ոսկի զրկել տեղւոյս պուրակական ազգային պանդային միջոցով:

Միայն այդ պայմանով կրնամ ընել: Վերջինեալ անձը անցեալ կիրակիէն ի վեր կը գտնուի Կ. Պոլիս եւ արդէն սկսած է աշխատել:

Ուստի եթէ կ'ուզէք երես ունենալ ձեր կառավարութեան առջեւ, պէտք եղած միջոցները ձեռք առէք:

Բարեկամաբար ողջունելով ձեզ:
Յր. Գ.

Տ. Տիգրան ձգնաւորեան հաղորդած է մեզ հետեւեալ յայտարարութիւնը, զոր անկողմնակա լուծեան պարտք մը կը համարինք հրատարակել իր խնդրանքով:

Հայ Ժողովուրդ,

Շարժումը՝ Սիրիայէն արտատպելով Յր. Գ. ստորագրութեամբ երկու նամակներ, որոց միոյն մէջ ըսուած է թէ արտասահմանի թերթերը լռեցունելու կարող անձը Տիգրան ձգնաւորեանն է, զիս բացէ բոց դաւաճան կը յայտարարէ:

Ինքզինքս եւ ամբաստանիչներս արդէն յանձնած ըլլալով արգարութեան ճանկը, աւելորդ կը տեսնեմ ուրիշ միջոցներով ինքզինքս արգարացնելու ջանալ:

Սինի ճիգ պիտի թափեմ՝ դատը հրապարակային ընել տալու, եւ կանխաւ հրատարակելով դատարանի նիստերուն օրն ու ժամը՝ պիտի հրաւիրեմ զքեզ, Ժողովուրդ, ներկայ գտնուիլ դատավարութեան:

Մինչեւ վերջին շունչս պիտի լռեմ անտեղի պատուելու փարագոյրը, որպէս զի բուն զերկատարները եւ դաւը մերկապարանս ընեմ:

Մէկ կողմ թողնելով պատժական օրինաց արամազրութիւնները, որոց անշուշտ պիտի ենթարկուի յանցաւորը, պէտք է որ բարոյական կամ հոգեւոր մահացում, կամ իմ զրգարութիւնս:

ՏԻԳՐԱՆ ՁԳՆԱՎՈՐԵԱՆ

Վառնա 24 մարտ 1898

Յ. Գ. — Ներկայ յայտարարութեան մէջ մէկ օրինակ ալ զրկած եմ Հայեցիի եւ Շարժումի ի հրատարակութիւն:

Նոյն

Կանխահաւ կը նկատենք այժմէն մեր կողմէն այս գործին մասին որոշ կարծիք մը յայտնել՝ Տ. ձգնաւորեանի աննպատակ թէ նըպատակաւոր: Սա միայն ստոյգ է որ ստակալի ամբաստանութեան մը ներքեւ կը գտնուի, որուն հիմնական կամ անհիմն ըլլալը հասկնալու համար պարտինք սպասել նոր յայտնութիւններու եւ փաստերու, զորս ամէնէն խղճամիտ եւ անկողմնակալութեամբ պիտի հաղորդենք իրաւունքի ընթերցողներուն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Սօֆիա 20 մարտ

Օրուան հրատապ խնդիրը միշտ Մակեդոնականն է: Օր շանցիք որ տեղական լրագիրներ որ եւէ ցաւալի թղթակցութիւն մը կամ լուր մը չը հրատարակեն հարստաբարեալ երկրէն, որուն վիճակը շատ լաւ կրնայ երեւակայել որ եւէ հայ, իբրեւ ծանօթ ու գիտակ թրքական արարքներու:

Ուր որ երթան եւ որո՞ւ հետ որ խօսին, ու հարցումը կը լսեն թէ ե՞րբ պիտի սկսի պատերազմը: Սրտի եւ մտքի այս յուզման մէջ ալ, յայտնի է թէ որ եւէ զինուորական շարժումի, քիչ չափ կարեւոր մարդու մը մէկ խօսքին, լրագրական գրուածքներու պատերազմասիրական մեկնութիւն կը տրուի, այնպէս որ այսօր շատ շատեր պատերազմը անխուսափելի եւ մօտալուտ իսկ կը համարին:

Իրաւ է որ թուրքը քիչ թէ չափ զօրք փութացած է զրկել թէ իւսքիւն եւ թէ պուրկար սահմանազրկ ժողովուրդներու, նորագոյն բացատրութեանց համեմատ որ եւէ յեղափոխական պատահականութեան մը հանգեալ կազմ եւ պատրաստ գտնուելու: Սակայն որովհետեւ թուրք կանտաւոր զինուորն ալ պաշտօնապէս պէս կը զարնէ, կը կողոպտէ, կ'անպատուէ եւ կ'աւերէ ոտք կոխած տեղը, եւ հարստահարալ պուրկար եղբայրներ այս գիտնալով սահմանազրկեմն առջին

կ'անցնէին, մեր կառավարութիւնն ալ իւր սահմանազրկութեան պահպանելու եւ թուրքի կողմէն որ եւէ պատճառաւ սահմանազրկութեան քննարկում մը արգիւնելու համար՝ Բոսթանլուի զինուորական պահպանութիւնը զօրացուցած է: Բայց այս շարժումներ միայն ցոյցի համար են որոնցմէ երբէք խաղաղութիւն չէ:

Անտարակոյս հպարտութեամբ կարելի է ըսել որ պուրկար բանակը յոյն բանակին հետ կարելի չէ բաղդաւել եւ ոչ մէկ կերպով, մեր զօրքեր եւ սպաններ աւելի կ'իրթ են եւ վարժ, կարգապահութիւնը տեղին է, որ բանակին ոգին է. սերպակաւ փառապանծ յաղթութեան յիշատակը տակաւին կենդանի է եւ բոլոր սրտեր կը հրահրէ, եւ այսօր եթէ պուրկարը կուրի բռնուի կրնայ ի հարկին մինչեւ կէս միլիօն զօրք հանել (գործօն, պահեստի եւ ազգային պահապան զօրք): Դեմ նեղութիւն պատճառել թուրք բանակին եւ պատերազմի մը վախճանը թերեւս նպատակաւոր եւ պատուաբեր ըլլայ Պուրկարի, սակայն խնդիրը միայն այդ կէտին վրայ չէ:

Արդեօք Սերպիա եւ Ռումանիա իրենց տեղը հանդարտ պիտի մնան այն միջոցին, երբ մենք մեր բոլոր ուժով նետուինք թուրքին դէմ: Վախ կայ որ այս պարագային մէջ Սերպիա Սլովենիցի վրէժը լուծել ուզէ եւ Ռումանիա ալ յառաջանայ մինչեւ Վառնա, բան մը որուն կը ձգտի տարիներ ի վեր: Ահա երկու նկատումներ, որոնք կը կապեն ու կը կապանգեն մեր ձեռքըն ու ոտքը: Իրերու այս վիճակին մէջ կարծեմ, կարելի չէ մտքէ իսկ անցնել պատերազմի մը հաւանականութիւնը, գոնէ այժմ: Ուրիշ խնդիր, եթէ հիւսիսային զօրաւոր տէրութիւնը զարկ մը տայ գործին եւ նեցուկ ըլլայ մեզ, ինչ որ շատ հաւանական չեղեալ իր անհաշուելի հետեւանքներուն պատճառով բոլոր եւրոպայի համար: Իսկ թէ ուր պիտի յայտնի Մակեդոնական խնդիրը, պիտի լքուի՞ ինչպէս Հայկականը: Այս մասին ալ յոյս կայ որ քիչ թէ չափ բարեփոխութեան պիտի ներդրուեն ի Մակեդոնիա, թէ եւ չըլլան այնքան զոհացողի հայրենասէր Մակեդոնացիներու համար:

Պարիս 10 մարտ

Բոլոր Ռումանիոյ մէջ Տօպրուճայի Պապատաղ քաղաքին հայ գաղութին էր միայն որ ազգային տեսակետով միութարական երեւոյթներ կը նշայէր:

45 տունէ բաղկացող տեղին հայութեան երկսեռ զարգը մայրենի լեզուն տեղեակ սաներ կը հառցնէր, որոնցմով երկզեցին ալ կը պայծառանար:

Աւանդական հաւատարմական հիւրասիրութիւն եւ մարդասիրութիւն մ'ալ մանաւանդ չքաւոր ազգակիցներու հանդէպ միացած վերոյգրեալ վիճակին հետ, առանձին հրապուրիչ գոյն մը կուտար Պապատաղի հայ ազգաբնակչութեան, որ այսպէս ճամբորդին աչքին կը ներկայանար իբր մանրանկար մը Հայաստանի հինաւորեց բարի կեանքէն:

Դժբաղդաբար հիւսա Պապատաղի մէջ ալ իրերը յեղաշրջուած են: Հակառակութեան սեւ ոգին այս տեղ ալ տակն ու վրայ ըրաւ ամէն բան: Դպրոցը ու թամիսէ ի վեր քաղաքումի ենթարկուած է. աշակերտներուն մեծ մասը օտար զարգիներ կը յաճախէ:

Երեք անձերէ հոգաբարձութիւն մը կազմուած է, որ անկողնով կը գտնուի զարգը բարեկարգելու, գրամական անձկութեան պատճառաւ: Թաղ. Խորհուրդը 40 ֆրանք միայն կուտայ իբրեւ ուսուցչի մը ամսական, որով կարելի չէ մարդու մը ապրիլ, գոնէ ազ-

գային ուսուցչի մը պատշաճ կերպով: Հոգաբարձութիւնը խորհեցաւ հանգէս մը կազմաւորել ի նպաստ դպրոցին, պարահանդէսն ալ գոհացուցիչ արդիւնք չի տուաւ, որովհետեւ շատ Հայեր մերժած էին իրենց զրկուած տոմսակները, այնպէս որ աւելի օտարազգիներ կը տեսնուէին պարահանդէսին մէջ: Երեսներն ճերմակ աչք Հայերուն որ ամեն բանի մէջ կուսակցական ոգիով կը մտածեն:

Այս է Պապատաղի տխուր վիճակը, որուն աւելի վատթարացումն արգելք կը ըլլայ ուսմանը ինչ ուսուցչուհի Օրիորդ Սոֆիկ. սա շարունակելով իր պաշտօնավարութիւնը, զարգը դերձ կը պահէ բոլորովին փակուելու վտանգէն: Պատիւ իրեն:

Պուրէշ, 16 մարտ

Կիրակի օրը յայտնի գումարաւեցաւ հակապատմութեան մեծ միթիւնը մը, որ իր շահագրգռական կողմն ունեցու Հայերու համար: Արդէն օր մը առաջ միթիւնը ծանուցանող յայտարարութիւններով ուղղուած էր քաղաքը: Յայտարարութեան ամփոփումն է հետեւեալը.

«Քաղաքացիներ
«Կառավարութեան վերջին ժամը հնչեց. ամէնքդ ալ եկէ՛ք ձեր պետերուն ձայնին. ազատական կուսակցութիւնը յետին մէջէն հանելու գործին ամէնքդ միասնաբար աշխատե՛ք՝ արգի տկար ու ըստբուկ կառավարութեան դէմ: Դեռ ներքէն անգին (Թրոնսիւլուսիա) գտնուող մեր եղբայրները դառնապէս կուրտասուեն տառապանաց ու բռնաբարութեան մէջ. կողքան գրեթէ կորսուած ազգային դատը. իրաւունքը բռնաբարուած է:

«Գողերը հրապարակով կը խորհրդան պատուաւոր անձերու վրայ. գործերու ուղղութիւնը խախտած է ազգ. ժողովին մէջ:

«Այսպիսի դժուար վայրկեաններու մէջ միայն մեր քաղութիւնը կրնայ զմեզ ապրտել:

«Քաղաքացիներ, գոյք որ տապալիցիք Սթուրգան (արգի նախարարապետը) երբ նա եկեղեցին բռնաբարեց, եկէ՛ք, ամէնքդ ալ, այսօր զայն նորէն տապալե՛ք, զի նա կրպանէ Ռումանականութիւնը եւ ազատական ազգ. կուսակցութեան գոյութեանը կը սպառնայ:

«Համախմբուե՛ք վաղը ժամը 2ին Տաշիս արահին մէջ:

Միթիւնին մէջ իօսեցան ազգային ազատական կուսակցութեան պետերն. բուն եւ խիստ ընտառապատմութիւններ ըրին Սթուրգան վարչութեան ու անձին դէմ:

Բայց ատենաբաններէն ամենափայլունն եղաւ Պ. Մօրցու, պետ ընկերվարականներու, որ հզօր շեշտերով Սթուրգանի ստուկ քաղաքականութեան թերութիւններն իրարմով, հարուածեց չորաչար անոր հակահայ ընթացքը սա բաւելով:

«Ինչպէ՞ս չի բողբոջ աշխարհի կառավարութեան մը դէմ, որ

Թուրքի բարբարոս սուրբին տակէն փախչող խնդ Զային վանեց ու հալածեց. այդ տարաբախտ ժողովուրդը կ'յուստարժէ քաղաքակիրթ ազգի մը գիրկը կը նետուի: Յիշեցէք թէ 20 տարի առաջ դուք ալ միեւնոյն վիճակին մէջ էիք, թէ ձեր Սօսէթիներն ու Գօկնիչներն Արեւմուտքի մէջ պաշտպանութիւն փնտռած են. ի՞նչ պիտի մտածէիք դուք արեւմտեան կառավարութեանց վրայ, եթէ անոնք ընդունած չըլլային մեր փախստականներն. ահա Սթամբուլն անգամ մըն ալ զմիշտ Ամերիկայի վարչապետներուն կարգը գասաց:» Բնութիւն ծափերու և «անկի» ազդակներու մէջ վերջացաւ այս բանխօսութիւնը ու բանխօսին մօտ գրտնուց հանդիսականներ իրենց ու գիտութեան թափէն մղուած չընորհակալութեան համարյոնքով ողորկեցին զինքը:

Միթիւնը վերջացաւ նախկին նախարար Պ. Ֆրէշվաի ատենախօսութեամբը, որ եզրակացուց թէ այս առաջին համախմբումը կառավարութեան զեկոյց մըն էր գործէ քաշուելու և թէ պէտք է հետեւաբար որ ժողովուրդը առ այժմ խաղաղութեամբ ցրուի:

Իսկ եթէ նախարարութիւնը որոշեալ ժամանակի մը մէջ, որ իրենց ցոյց պիտի տրուի, ետ չի քաշուի, այն ուստի ժողովուրդը իրաւունք պիտի ունենայ թագաւորին գիմելու ու հրապարակային ցոյցեր ընելու:

Ժողովուրդէն ներկայացաւ Պ. Ֆրէշվաի եռագործ ծաղկեփունջ մը ի նշան համակրութեան:

ԼՐԱՔԱՆ

Բազմէն Նոր Դարի կը գլին. «Մանթաշեանի նախագահները դործարաններ իր բոլոր պարագաներով արդէն ծախուել են 22 1/2 միլիոն ռուպլով: Առնողը անգլիական ընկերութիւնն է: Առաքելներ իր նախագահները եւ գործարանները ծախում է 5 միլիոն ռուպլով: Խօսք կայ Նօթէի մասին որ պատրաստակաւութիւն է յայտնել իր բոլոր գործարանները եւ նախագահները ծախելու 65 միլիոն ռուպլով:»

Թիւրքիայէն եկած լուրեր կը հաստատեն թէ Նուրպաի միսիօնարներին յանձնուած որբերուն մասին միեւնոյն ուղղութիւնը չեն բռնած: Ոմանք կը ջանան որբերը ուժացնել իրենց ազգ. եկեղեցիէն, մինչդեռ ուրիշները, աւելի ազատամիտ, կը թողուն որ անոնք յաճախեն եկեղեցի ու կատարեն իրենց կրօնական պարտականութիւնները:

— Զուխաճեանի թաղման հանգէսը մեծ չքով կատարել են մեր Իզմիրլիի ազգակիցներ: Ժողովրդի ահագին քաղմութիւն մը, վարչական մարմիններ, ազգ. ընկերութիւններ եւ վարժարաններու աշակերտներու աշակերտութիւնը ներկայ գտնուած են յուզարկաւորութեան, որուն ժամանակ հանգուցեալին յօրինած մէկ եղանակը կ'ուզէր երաժշտական ընտիր խումբ մը: Որոշուած է փառաւոր յիշատակարան կանգնել նշանաւոր հայ արուեստագէտին գերեզմանին վրայ:

— Քանի մը շարքով ի վեր եզրագծէն ալ հայ գաղթականներ սկսեցին Կ. Պօլս վերադառնալ:

— Բազէլի հայ համալսարանականները մէջ բարեկենդանի մօտ կատարուել է 100 հարանիք:

— Մեզ տրուած տեղեկութեան մը համաձայն Կ. Պօլսի ֆուտսալիստներն պահին Ս. Ալարեանի եւ Պապական նուիրակին գործադրած ազդեցութեան հետեւանքով Երիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը յետաձգուել է անորոշ պայմանաւանով:

— Իրաւէի մը համաձայն Կ. Պօլսի պետական վարժարաններու մէջ ընդունուելիք 25 հայ աշակերտները պիտի գրուին կայսեր. Լիւթին, զինուորական—բժշկական, Միլիթի, Երկրագործական եւ Արհեստից վարժարաններուն մէջ:

— Մօսկուայի Լազարեան ձեռնարանը նոյն հաստատութեան նախկին վերահսկող Քանանեանի հիմնած երկու մրցանակներուն համար որոշած է հետեւեալ նիւթերը:

1. Հաւաքում եւ դասաւորութիւն այն տեղեկութիւններու գորարար մատենագիրներ հաղորդած են հայ ազգին մասին մինչեւ 1 էրդ. դարը, այդ տեղեկութիւններու քննական քաջատրութեամբ:

2. Հաւաքում ժամանակակից Հայերու այն սովորութիւններուն, որոնք իրաւաբանական հանգամանք ունին:

Մրցանակները 600ական ռուպլի են: Աշխատութիւնները կրնան գրուիլ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն կամ գերմաներէն եւ պէտք է յանձնուին մինչեւ 7/19 օգոստ. 1900: Երբ երկու աշխատութիւն գիտական հաւասար արժէք ունենան, քննիչ խորհուրդը իրաւունք ունի մրցանակը երկուքի բաժնելու:

— Եւրպիւս-Գորհհիսարի շնորհունակ առաջնորդ Ամբրոսիոս վրդ. վիճակին կարօտեալներուն ի նպաստ հանգանակուած գումարն 100 ոսկի, ինչպէս և ուրիշ հասոյթներ իւրացուցելու է իրողութիւնը հաստատուած է Պատրիարքարանի քննիչ յանձնաժողովին ձեռքով: Վարդապետը ինքզինք արգարացնելու համար իր հաշիւներուն մէջ իրեն ամսական յատկացուցել է 22 ոսկի և 7 ոսկի առաջնորդարանի սուրճի և ուրիշ մանր ծախքերուն, մինչ միւս կողմէն վիճակին առաջնորդական հասոյթներն ալ զանձած է:

Պատրիարքարանը զբաւել է աւոր վրայ գտնուած 130 ոսկին: Իր քով գտնուել են նաեւ նպաստի բանի մը չէքեր, 100 ոսկի արժէքով, զորս զօկամակեր է ըստորագրել, որպէս զի Պատրիարքարանը չգտնէ գանձը. յետոյ ստորագրելու համար պահանջել է 10 ոսկի: Ամենէն վերջ չէ ուզել բաժնուիլ Պատրիարքարանէ, ուր կը պահանջէ որ իրեն սենեակ մը յատկացուի, տուարկելով որ ապրուստի միջոց չունի: Մակայն Ս. Պատրիարքը կառքի մը մէջ դնել տալով զրկել է զինք հիւանդանոց: Տեսնելը արժանաւոր պատիւ մը պիտի ստանայ այս հոմալաւոր գոյը որ երբեմն, երբ Բաբերգի տուջնորդ էր, այնտեղ երկրագործական զարկոյց մը հաստատուելու համար հանգանակած գրամը նոյնպէս շորթեց:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայի Միացեալ—Նահանգները կը պնդեն իրենց սա կրկին պահանջուններուն վրայ թէ Սպանիա դադարեցնէ պատերազմական գործողութիւնները եւ արձակէ ձերբակալուած եւ բանտարկուած ապստամբները: Եթէ Սպանիա մերժէ այս առաջարկները, հանրապետութեան նախագահը խնդրել պիտի ներկայացնէ Միացեալ—Նահանգներու վեհաժողովին:

Սպանիոյ նախարարապետ Սակասթա տեսակցութեան մը մէջ յայտարարել է թէ Սպանիա խաղաղութեան սիրոյն համար պիտի ընէ ամէն զոհողութիւն որ երկրին պատիւին եւ իրաւունքներուն չի զգչիր:

Նախարարապետը եւ գաղթականութեանց ու արտաքին գործերը նախարարները կարեւոր տեսակցութիւն մը ունեցան Մատրիսի ամերիկեան դեսպանին հետ: Սպանիա գրաւորապէս առաւ իր պատասխանը, զոր Միացեալ—Նահանգներու դեսպանը հաղորդեց իր կառավարութեան:

Մատրիսի մէջ շրջաբերող վերջին դրոյցի մը համեմատ Սպանիոյ եւ Միացեալ—Նահանգներու մէջ արդէն գոյացել է համաձայնութիւն մը Մէյն գրահաւորին գործին, ինչպէս նաեւ Վուպայի մէջ տեսականապէս խաղաղութիւնը հաստատելու խնդրին մասին: Իսկ Բարիդի Նիւ-Եոնք Զեռայց կրնէ թէ Սպանիա Միացեալ—Նահանգներէն խնդրած եւ ստացած է 23 ժամ իր վերջնական պատասխանը ապու համար հանրապետութեան պահանջումներուն: Եթէ պատասխանը մերժողական ըլլայ, հանրապետութեան նախագահը անմիջապէս վերջնադիր մը պիտի դրկէ Մատրիսի կառավարութեան:

Կր հերքուի այն լուրը թէ Սպանիա կը յօժարի Գուպայի անկախութիւն ստալ իր փոխարինութիւն 40 միլիոն ազ. ոսկի առնելով Միացեալ—Նահանգներէն:

Միակուտին արտաքին գործերու յանձնաժողովը Գուպայի խնդրի մասին իր տեղեկագիրը բերաւ ժողովին, որուն կը յանձնարարէ որոշել որ Միացեալ—Նահանգները գործնականապէս միջոցներ տալուամբ կզդին ի նպաստ:

— Անգլիոյ խորհրդարանին մէջ Գերդըն յայտարարած է թէ Ռուսիա իր նորագոյն խոստումին համեմատ պիտի յարգէ բոլոր իրաւունքներն ու առանձնաշնորհումները, զոր միւս տէրութիւններ Զինի մէջ ստացած են զաշնագիրներու զօրութեամբ:

Վերջին լուր մը կրնէ թէ Անգլիա սկսած է նոր պահանջուններ ընել Իէքինի կառավարութեանէ, իւր փոխարինութիւն ուրիշ տէրութեանց ձեռք ձգած զերքին եւ ազդեցութեան Զինի մէջ:

— Ժիտտէի մէջ մարտ 18ին ժանտախտի 2 դէպք եւ երկու մահ, 19ին մէկ դէպք պատահել է: Կ. Պօլսի առողջապահական ժողովին որոշումով Ժիտտէ զրկուեցան երեք բժիշկ որոնց իրազօր իշխանութիւն տրուած է ամէն միջոց գործադրելու, ժանտախտին տարածումը արգիլելու համար:

— Բարիդի վճռաբեկ տեսանք ջնջեց Զօլայի գէմ տրուած վճիռը՝ սա օրինական նկատողութեամբ որ պատերազմական խորհուրդը, զոր Զօլա անուանարկած էր, պէտք էր որ դատ բանար եւ ոչ պատերազմական նախարարութիւնը: Պատերազմական խորհուրդը կը խորհի հիմա թէ ինչ միջոցներ հարկաւոր ձեռք է առնել վճռաբեկ տեսանքի այս որոշումէն ետքը:

ՕՍՄԱՆԼԸ

(Կեջէն Արախեմիզէն skıvırd վի խիքաւ)

Սպանիոյնը՝ զպուսիւսլէր խա. սիմանէ անլաշըմասըն. խալիսանէ տիր. տօղրու գալլէ սէօյլէյօրըլ քի պիր ազտէ պու նօգլթալարտան պահս իտէսինիլ տէ Սուրատ պէյ կիպիլէրին պուլանաւըմըլ օլտըլը միտէլէր տուրուլըն վէ սիլին տէ շէքլ ու սըֆաթընըլ պիր ազ մէյ. տանա չըգօըն:

Օմանլը իքթիսաք վէ քէրազըր ձեմիյէքինին մազսէտի ապիսի՝ էկէր քէնտի պէյանլարը իւլըլէ օս. մանլըլըլը երւքսէլէ գալտըրմագ վէ հէր պիր թապանըն հուգու. գընը միւսավաթ իւլըլէ թանըմագ վէ թէրագըլթալթ ու մէտէնիլթեթ եօլընը էլէ ալմագ վէ նիհայէթեթ ալա մէզհէպ ու միլիյէթ թէֆ. բիգ իթմէմէք իսէ, պիլիմ վէ պիւ. թիւն միլլէթտաշարըմըլըն ար. զուլարը տախի պու նօգլթալար. տան իպարէթ օլմալլէ, քէնտիլէ. բինէ հէմէֆքեար վէ հէմքայ պու. լընաճալըմըլա ապա չիւպհէլէրի օլմաըն:

Յագաթ պու արդուլարը գուվ. վէի պաթընէտէն գահիրէ վէ ա. միլիաթա չըգարմագ իլլին նէ մա. նիլէրէ թէսատուֆ օլընաճաղը միւլ. հապա իտիլտիքտէ, պաշըմա իւլ նէվ միւլքիւլաթա թէսատուֆ օլընաճաղը աշիքեար տըր. էվլէլա թամիր ու իսլահաթ գապուլ իթ. մէլ Պապը Ալի իտարէսի, սանի. էն՝ օսմանլը հիւքիւմտալարընտա, եանի Սուլթանլարտա խալիֆէլիք սըֆաթը տախի մէվճուտ օլմաըլ, սալիսէն՝ իքթինճի մանիտէն թէվէլ. լիւտ իթմիլ օլան վէ իսլալարտա հիւք միտէն թաատուլը տիլիլէ վէ իսուսուլթի մէզհէպիլէ. իշ. պու իւլ նէվ միւլքիւլաթըն էօնիւ. նիւ ալմաղլէ եալընըլ մազսէտ հուսուլա կէլէպիլիր, վէ պուլա. ըն պիրիսինտէն սարիքը նապար իտիլիր իսէ, մազսէտի ապիմիլէ եէթիլմէք միւլքիւլաթի տիր. Մէ. մուլ իտէրիլ քի կէնճ թիւրք վա. թանտաշարըմըլ տախի պու մու. հիւմ նօգլթալարը իթիւրաֆ իտէր. լէր:

Պինանէ ալէյհ՝ իլք մանիի, եա. նի հիւքիւլթիւն միւլմանաթընը մահվ իթմէք իլլին լիսանէն վէ գալէմլէ պէյան իթմէքտէ օլտըլ. լարը էֆքեար ազլը պաշընտա օ. լան հէր պիր օսմանլը իլլին գա. պուլա շայան տըր. Լաքին իքթինճի վէ Լչիւնճի նօգլթալա կէլտիկի. միլգաէ պիլիմ կէնճ թիւրքլէր սիւ. քիւտ իտէյօրլար. վէ չօզլարը տա աքսի օլարագ՝ խալիֆէլիկի Սուլթանլըգտան ալըմալա ապա ըա. զի օլմալօրլար. պիլ պուլարըն մազսէտի ապիսինի խալիսէթ նօգ. թաի նապարընտա ապա անլամա. յօրըլ. Սէհպա կէնճ թիւրքլէր չու. սարը մէտէնիտէ՝ մէմալիքի օսմա. նիլէնին խալապիլէթի վէ օսման.

լըլարն պու տէրէճէ կէրի դաւմա-
սը վէ նիհայէթ պու կիւն տէվէ-
թի օսմանիյէնին պիւթիւն պիւ-
թիւնէ պաթմագ վէ մահվ օլմագ
տէրէճէսինէ կէլմէսի խալիֆէլիք
Սուլթանըզլէ նէտի վահիտտէ
պուլընտըզը սէպէպտէն օլտըզնա
էլան գանի օլմամըլար մը :

Էվլէտէն պէրու օսմանը խը-
րըսթիյանլարն ըսեանլարը վէ
մէմալիքին բարչա բարչա օլմասը
խալիֆէլիքին թէէսի ու թաա-
սուպընտան իլէրի կէլմիշ օլտըզը
իթիւրաֆ իթմէմէք միւմքին մի-
պու կիւնէ գատար մէզէպի մի-
լիլէթտէն ֆարգ ու թէֆրիք ի-
տէմէլէնլէրէ նէ՝ իսիմ վէրիմէլի
տիր : Էլէր օլկիպիլէր՝ Սուլթան-
լար խալիֆէլիք իւնվանը իլէ տիւն-
եա իւզէրինտէ պուլընան ումուս
միւլիմանլարը նէք վիճուտ իտուպ
տէ, տէվէթի օսմանիյէ նամը ի-
լէ Հինտիսթանը, Աֆրիգայը վէ
սայիւ իսլամլարտան միւթէմէքին
գըթալարը զապթ ու իսթիլա իթ-
մէք խիւլիստէնա գարըլմըլար ի-
սէ, ճէհայէթին էն սօն տէրէճէ-
սինտէ պուլընըլար տէմէք տիր :
Պուլնտան գաթի նազար, մէզէպ
իլէ տիւնեայ հիւքմ իթմէք ար-
գուսընտա պուլընանլար « թէրագ-
գը ու ինսանիյէթ » բէլիմէլէրին
մանէսինի պիւլմէլարը վէ Օսման-
ըզլըն նէ՝ թէհիլէրէտէ պուլընտըզը-
նը էլան սէլմէմիշլէր տէմէք տիր :

Օ՝ հալտէ « Օսմանը իթմիհիստ
վէ թէրագգը ճէմիյէթիսին մագ-
սէտի իսմինտէն տալի անլաշըլ-
տըզը իւզրէ՝ խուսուսաթ մէզբիւ-
րէ հագգընտա քէնտի նազարիաթ-
լարընը « Օսմանը » տա նէլը իթ-
մէլէրի պէլէնիլի :

ՏԱԽԻԼԻՅԷ

Բրէնս հաղրէթլէրի մարտ 17
սալը կիւնիւ վիէննատան Սօֆի-
այա ալտէթ իթմիշ տիր :

— Սուլթանըն քէրիմէսի Նաիլէ
հանըմա իզտիվաճը մինասիպէթի
իլէ, բրէնս հաղրէթլէրի թարա-
ֆընտան Պուլկարիա մասլահաթ-
կիւզարը Մ. Մարքօֆ վասիթա-
սը իլէ զիգըլմէթ հէտիյէլէր վէ-
րիլմիշ տիր :

— Ռուսոնուգ ֆիլէնքհանէսի վու-
գուսթընտան տօլայը կ. իվանօֆ
վէ՝ գարտաշլարա գարշը աշըլան
տալա՝ թախսիս օլուան կիւնտէ
շահիտլէրին պիր գըմընըն Րուս-
ճուգտա հաղըր պուլընմատըզը սէ-
պէպլէ, պաշգա կիւնէ թէէլիւր
օլմուշ տըր :

— Սոն նիւսիւմիզտէ՝ Եամպօլ—
Սարամպէյ տէմիլիօլ խաթիթընըն
խաթիճարը գըմընտա հիւքիւմէ-
թին շարգ տէմիլիօլարը գուս-
բանեասը իլէ սլաշըպ, պու խու-
սուստա Պապը Ալի իլէ մուխա-
պէրէյէ կիրիշմիշ օլտուզընը եազ-

մըշ իտիք իսէ տէ, պու հալտաթի-
սին տալըլ օլտուզը վէ հիւքիւ-
մէթ իլէ մէզբիւր գուսթանեա պէյ-
նինտէ պիր իթմիֆապ հասըլ օլ-
մատըզը թաատիգ օլուանը տըր :

— Ֆիլիպէ իսթիւնաֆ մահքէմէ-
սինտէ էօլիւմէ հիւքմ՝ օլընմըշ օ-
լան Պոյլէֆին զէվճէսի Սօֆիա-
տա նէֆսինէ սուի գաստ իթմիշ
տիր : Մէրհումէ գատըն զէվճինին
իլէտիլի ճինայէթտէն տօլայը
քէնտի նամուսընա խալէլ կէլտի-
կիւնտէ քէնտի քէնտինի թէլէֆ
իթմէյէ գարար վէրմիշ :

— Բիվայէթէ նազարէն՝ Սօֆիա
թիւճճարլարընտան իքի զաթ էֆի-
րայա Բէրնիք մատէնի քէօմիւրիւ
կէօնտէրմէք գըմընտա հիւքիւմէ-
թէ պապը թէքիլիլէրտէ պուլըն-
մըշլար տըր :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԷ

Ինկիլթէրա մէպուսան մէճիւսի
Եունան իսթիգրալընը թէհահիւտ
իթմէյէ տայիւր հիւքիւմէթին վէր-
տիկի գարարը գաթիէն գապու
իթտի :

— Եունան մէպուսան մէճիւսի
վիւքէլա բէլիսինին թէքիլիլի իւզ-
րէ՝ իսթիգրալըն թէհահիւտին-
տէն տօլայը ինկիլիլ, ուստ վէ
ֆրանսըզ տէվէթլէրինէ ալէնէն
թէլէքբըլը վէ մէմուսիլէթ պէ-
յան իթմէյէ գարար վէրտի :

— Պապը Ալինին Գարաթէտու-
րի բաշանըն նամգէտիլիլի պէր
թարաֆ իտէրէք, կիրիա վալիլի-
կի խուսուսընտա տէվէթլէրէ նէ-
նի պիր թէքիլիլ իթմիշ վէ իշպու-
թէքիլիլին իքի իւշ տէվէթլէրտէն
գապուլիլթ պուլմուշ օլտըզը սէօյ-
լէնմէքտէ տիր :

Բօլիք Գօլուսթուսիլէն մէվսուգ
մէնպատտան գապու իթտիլի մա-
լիւմաթա նազարէն՝ ուստ, ինկի-
լիլ վէ ֆրանսա տէվէթլէրինին
Սուլթանըն արղուսը խիլաֆընտա
օլարագ բրէնս Եօրկիոսը կիրիտ
վալիլիլինէ թային իտէճէքլէրինէ
տայիւր կէլէն հալտաթիս պի էսաս
տըր :

Էվրոբալը ամիրալլարըն թալէպի
իւզրէ Գանիա էթրաֆընտա պու-
լընան թիւրք ասքէրլէրի ալաֆ-
ապրիլ 2-յէ գատար տիկէր մահալ-
լէրէ սէվգ օլընաճապար տըր :

— Գրալ Եօրկիոսըն էօմիւնէ գատ
իթմիշ օլան Գարտիցի վէ շէրիքի
կէօրկի մահքէմէ թարաֆընտան
էօլիւմէ հիւքմ օլընտըլար :

— Ֆրանսա սէֆիրի Մ. Գամպօն
Պապը Ալիյէ պիր նօթա կէօնտէ-
րիպ էրմէնի գըրկընլարը էսնասըն-
տա կարարտիտէ օլան Անատըլըն
լաթին մանասթըր, վէ քիլիսէլէ-
րի իլիւն թալմիլիթ թալէպ էյ-
լէմիշ տիր :

— Սուլթան խարիճիյէ նէզարէթի
միւսթէլարը Տատեան Ալթին բա-
շայա մուրասա օսմանիյէ նըշա-
նընը իհտա էյլէմիշ :

— Թիւրք հիւքիւմէթինին՝ Մալ-
գէր թիւֆէհլէրի իլիւն 10000000
տաֆի ֆիլէնի գապարը պիր տ-
ւատրիա ֆապրիգասընա վէ պու-
ֆիլէնիլէրէ քիֆայէթ իտէճէք
մըգտար տիւմանըզ պարուլ աա-
խի պիր ալման ֆապրիգասընա
սիրարիշ վէրմիշ օլտուզը Ֆրեւ-
սէնպլար պիլտիլիյօր :

Սլմանպօլ ֆիլէնիլիսինէն պու-
ֆիլէնիլէրի լալմ վէճէ իւզրէ տօ-
տօլտուրուպ հաղըր իթմէյէ մու-
վաֆագ օլապիլէճէքմիշ :

— Մէրհում Մաքէտոնսքինին
գաթիլինի պուլմագ իլիւն թիւրք
հիւքիւմէթինին իթտիլի զայրէ-
թին պու կիւնէ գատար սէմէրէ-
սիլ գալտըլընը վէ միւթէվէֆֆա
նընագրապարընտան Մէրէզտէքի
պուլկար կիրմաղիա տիրէքթօնը
կ. Նաուսթիլըն պու ճինայէթ հագ-
գընտա պապը թահգիգաթ իճրա
իթմէք մաքստի իլէ Սօֆիայա
կիթմիշ օլտըզընը Լէվանք Հէրալտ
եաղըյօր :

— Թիւրքիա թարաֆընտան
Րուսիայա էօտէնէճէք լծալմինա-
թը հարպիլէյէ մահապէն՝ վիւա-
յէթլէրտէն էօտէնմէր իւզրէ հէ-
վալէ վէրիլմէսի գարարիլի իտի
իսէ տէ, պու խուսուստա իքի
տէվէթլէր պէյնինտէ վուգու պու-
լան մուխապէրաթտան հիշ պիր սէ-
մէրէ հասըլ օլմայըպ, մէսէլէ եի-
նէ իիւզ իսթիլա գալմըշ տըր :
Րուսիա 850,658 լիւրա թալմինա-
թը հարպիլէ վէ 4,696,599 լուպ-
լի տալի 1876 մուհարէպէսինտէ
հէսիւր տիւշմիշ թիւրք ասքէրլէրի
իլիւն օլան մէսարիֆ պէտէլի թա-
լէպ իտէյօր :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Յառաջիկայ շաբաթ իրիկուն,
28 մարտ, հայ գերասանական
խմբին ձեռքով Անկէլ Սլաֆօֆի
սրահին մէջ խաղին անգամ պի
տի ներկայացուի « Ալէքսինացի ա-
առուս, կամ, 1876 թ թուրքեւ-
սերպ պատերազմը » :

Խաղին կանոնաւոր և յաջող
ներկայացումին համար շանք և
զոհողութիւն խնայած չըլլալով,
գերասանական խումբը կը յուսայ
թէ հայ հասարակութիւնը պիտի
փութայ զինք քաջալիւրել ներկայ
գտնուելով ներկայացումին :

ՏՕՔԹ. Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

14 տարուան փորձառութենէ
յետոյ, հաստատած է իր բնակու-
թիւնը Վառնա, Գ. Թաղ, թիւ
310, Տօքթ. Կալապօլի տունը,
քաղաքապետական պարտէզին դէ-
մը ու կ'գործաւանէ ամէն տեսակ հի-
ւանդութիւններ, մասնաւորապէս
նեքրին, կանանց, տղայոց և ծը-
նընդական գործարանաց, Հիւանդ
կընդունի իր տունը ամէն օր եւ-
րոպական ժամը 9էն 12 և 3էն 5 :
10—3

ԶԱՄԻՐԻ ԲԻԱՅԱՍԻ

Վառնա 24 Մարտ
Պուլտույ
Վալիօն, լիպրա 47-51, հէքթօլ.
8.70-9.60 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ.
9.11-20 ֆրանք
Արքա
Լիպրա 38-41, հէքթօլ. 4.40- 5.—
ֆրանք

Մարք
Վալիօն, լիպրա 57-58 հէքթօլ.
6.40-6.50 ֆրանք
Արապա, լիպրա 57-61 հէքթօլ.
6.80-6.90 ֆրանք

Ֆառաշէլա
100 օգգասը 19-24 ֆրանք՝ մալա
կէօրէ
Արապա մուսթէլէսի՝ Նարօլէտն
21 ֆռ. հիսապը իլէ տիր.
Կիւնտէ 8-10 վալիօն վէ 15-20
արապա պուլտույ, 10-15 արապա
արքա, 4-5 վալիօն վէ 8-10
արապա մըսըր կէլմէքտէ տիր :

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն ՀԱՅ ԳԱՂՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանի հայ գաղութի
մասին պատմական և ազգագրու-
կան խիստ շահեկան տեղեկու-
թիւններ պարունակող սոյն անդ-
լիէրէն երկասիրութիւնը, զոր հե-
ղինակը, Տիար Մարգարէ Սէթ-
եանց՝ կալկաթայէն շրկած է մեզ,
կարծէ որ ամէն անգլիագէտ ազ-
գայիններու թանգարանին մէջ
գտնուի :

Գինն է 6 լէվ
Կիւրորնատեղի Վառնա
Ա. Զարպիւնիսեան
« Հայկական Գրատուն »

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻԿՆ Պոռպարեռն լեզուի

Պուլկարիէն սորվիլ փափագող-
ները՝ առաջնորդ ունենալով իրենց
սոյն քերականութիւն՝ կրնան վից
ամսուան մէջ կարգալ գրել և խօ-
սիլ : Կը ծախուի ֆ. Պօլիս, թըզ-
թալաճառ թագուր Գ. Հինտիսին
մօտ :

Գինն է՝ ընտիր կալմ, հրահանգ-
ներու բանալին մէկտեղ, 6 լէվ.
Թըլթալալմ, առանց բանալիի 4 լէվ.
առանձին բանալին 60 սանթիմ :

Միծաքանակ գնողներուն մաս-
նաւոր գեղջ կըլլայ :

Կը ծախուի իսեւ ի վառնա
գրաւաճառ Տ. Զարպիւնիսեանի
մօտ :

ԱԶԴ

Իրաւունք կը ծախուի Սասուն
սրճարանի ծխալուծառ Պ. Վահան
Անտօնեանի, Սուսալա գուրու գահ-
վէճի Պ. Յալիւր կէօղիպէօյիւք-
եանի և Ալաթիւրահման միլիթին
դէմ հայկական Գրատան մէջ
ի վառնա :